Այբ
կրթական հիմնադրամ

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Երևան
2024

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
7	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
10	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գործադիր տնօրեն՝	Գոհար Հովհաննիսյան

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Այբ » կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ» կրթական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերելբավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք – աուդիտի շրջանակ

Ընկերության 31.12.2022թ.-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2023թ. օգոստոսի 1-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտ դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

1 օգոստոս, 2024թ.

Վահագն Սահակյան, FCCA

Տնօրեն

«ԱՅԲ»ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (Հազար դրամ)

	Ծան.	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Վերաներկայացված*	2022թ հունվարի 1-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4	5,525	13,303	15,459
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	9,426	21,030	32,633
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		-	-	1,178
Հետաձգված հարկային ակտիվ	6	2,440	2,651	-
		17,391	*36,984*	*49,270*
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	7	802	12,494	27,771
Դեբիտորական պարտքեր	8	14,460	15,856	28,941
Ժամկետային ավանդներ		102,602	125,725	111,915
Դրամական միջոցներ	9	17,929	53,016	82,666
		135,793	*207,091*	*251,293*
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		*153,184*	*244,075*	*300,563*
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարձակալության գծով պարտավորություններ	10	-	11,127	24,177
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	138,885	127,053	4,755
Երկարաժամկետ փոխառություններ		86,742	112,613	1,097
		225,627	*250,793*	*30,029*
Ընթացիկ պարտավորություններ				
Վարձակալության գծով պարտավորություններ	10	11,127	13,050	10,937
Կարճաժամկետ փոխառություններ		-	-	115,383
Առևտրային և այլ կրեդիտոր. Պարտքեր	12	52,715	92,077	37,122
Եկամուտներին վերաբերող շնորհներ		-	-	25,153

	63,842	*105,127*	*188,595*
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	*289,469*	*355,920*	*218,624*
Զուտ ակտիվներ			
Կուտակված շահույթ/(վնաս)	(136,285)	(111,845)	(81,939)
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	*(136,285)*	*(111,845)*	*(81,939)*

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են «Այբ» կրթական հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. օգոստոսի 1-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

*Նախորդ ժամանակաշրջանների վերաներկայացումը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

Գործադիր տնօրեն

Գոհար Հովհաննիսյան

Ֆինանսական տնօրեն

Հայկ Պողոսյան

«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (Հազար դրամ)

	Ծան.	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Վերաներկա-յացված*
Նվիրատվություններից եկամուտ	13	366,776	305,820
Պայմանագրերից հասույթ	14	206,809	198,067
Այլ եկամուտ		3,502	4,416
		577,087	**508,303**
Ծրագրային ծախսեր	15	(475,314)	(514,727)
Ծառայության ծախսեր	16	(131,844)	(218,743)
Այլ ծախսեր		(1,073)	-
Գործառնական գործունեությունից (վնաս)/շահույթ		**(31,144)**	**(225,167)**
Ֆինանսական եկամուտ		4,778	5,213
Ֆինանսական ծախսեր		(1,900)	(3,157)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս) զուտ		4,037	26,420
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		*(24,229)*	*(196,691)*
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	17	(211)	2,907
Տարվա շահույթ/(վնաս)		*(24,440)*	*(193,784)*
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		*(24,440)*	*(193,784)*
Տարեսկզբին զուտ ակտիվներ		*(111,845)*	*(81,939)*
Տարեվերջին զուտ ակտիվներ		*(136,285)*	*(111,845)*

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են «Այբ» կրթական հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. օգոստոսի 1-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

*Նախորդ ժամանակաշրջանների վերաներկայացումը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

Գործադիր տնօրեն

Գոհար Հովհաննիսյան

Ֆինանսական տնօրեն

Հայկ Պողոսյան

	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Վերաներկա-յացված*
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Դրամական մուտքեր հաճախորդներից	185,221	241,708
Ստացված շնորհներ և նվիրատվություններ	373,662	438,340
Այլ մուտքեր	-	285
Տրված շնորհներ և նվիրատվություններ	(56,281)	(131,004)
Վճարումներ մատակարարներին	(187,865)	(193,912)
Վճարումներ աշխատակիցներին	(342,782)	(323,589)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(28,045)**	**31,828**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	-	(4,826)
Բանկային ավանդների տեղաբաշխում	(96,382)	(56,404)
Բանկային ավանդներից մուտքեր	123,759	23,320
Ստացված տոկոսային եկամուտ	4,778	1,520
Ներդրումային (գործունեության համար օգտագործված)/գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**32,155**	**(36,390)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով վճարներ	(16,436)	(15,560)
Փոխառությունների մարում	(25,895)	(3,596)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(42,331)	(19,156)
Բանկերում մնացորդների զուտ աճ	(38,221)	(23,718)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	3,134	(5,932)
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	**53,016**	**82,666**
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	**17,929**	**53,016**

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են «Այբ» կրթական հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. օգոստոսի 1-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

** Նախորդ ժամանակաշրջանների վերաներկայացումը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:*

Գործադիր տնօրեն

Գոհար Հովհաննիսյան

Ֆինանսական տնօրեն

Հայկ Պողոսյան

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 8

1. Ընդհանուր տեղեկություններ 11

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ 12

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 13

4. Հիմնական միջոցներ 22

5. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ 23

6. Հետաձգված հարկային ակտիվ 23

7. Պաշարներ 23

8. Դեբիտորական պարտքեր 24

9. Դրամական միջոցներ 24

10. Վարձակալության գծով պարտավորություններ 24

11. Ակտիվներին վերաբերող շնորհներ 25

12. Առևտրային այլ կրեդիտորական պարտքեր 26

13. Նվիրատվությունից եկամուտներ 26

14. Պայմանագրերից հասույթ 26

15. Ծրագրային ծախսեր 26

16. Ծառայության ծախսեր 27

17. Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում 27

18. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ 27

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ 27

19. Ֆինանսական գործիքներ 28

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ 28

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները 28

20. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ 29

21. Պայմանականություններ 32

21.1 Ապահովագրություն 32

21.2 Հարկեր 32

21.3 Կապակցված կողմեր 33

21.4 Վերահսկողություն 33

21.5 Գործարքներ կապակցված կողմերի հետ 33

22. Նախորդ ժամանակաշրջանների էական սխալի ուղղում 34

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամը և գործունեությունը

«Այբ» կրթական հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է 2006թ. դեկտեմբերի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Հիմնադրամի հիմնական նպատակն է՝ Հայաստանում բարձրորակ, բազմաբևեռ, օրինակելի կրթական միջավայր ստեղծելը, Հայաստանի կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը նպաստելը, դպրոցականներին և երիտասարդներին ուսման հարցում և իրենց կարիերայի զարգացման գործում աջակցելը, կրթական ոլորտի կազմակերպությունների աշխատակիցների օժանդակումը և նրանց շահերի պաշտպանումը:

Հիմնադրամը քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը համախմբում է այն մարդկանց հնարավորությունները, ովքեր գիտակցում են յուրաքանչյուրի կյանքում կրթության կարևորությունը և կամենում են ստեղծել որակյալ ու բազմակողմանի կրթական միջավայր:

Հիմնադրամի հիմնադիրներն են՝

- Աշոտ Ասլանյանը,
- Դավիթ Փախչանյանը,
- Արամ Փախչանյանը,
- Կարո Սարգսյանը,
- Կարեն Մուսայելյանը,
- Դավիթ Ցանը,
- Մաթևոս Արամյանը,
- «Օկտագոն» ՍՊԸ-ն:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից՝

- Արամ Փախչանյան,
- Դավիթ Փախչանյան,
- Կարո Սարգսյան,
- Տիգրան Հարությունյան
- Հակոբ Մոմջյան

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 31 մարդ (2022թ.՝ 63 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0052, Թբիլիսյան խաղուղի 11/11:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Պատրաստման հիմունքները

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

Հաշվետու տարում առկա չեն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, որոնք կարող են հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ::

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

ա) Նոր և փոփոխված ստանդարտներ ու մեկնաբանություններ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտները նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա.

- Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՍՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՍՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Ստորև ներկայացված նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա.

- Վաճառքի և վարձակալության վերադարձի պարտավորություն (Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն),
- Պարտավորությունների դասակարգումը ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)
- Քովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի Փոփոխություններ, Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում)
- Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ):

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն

վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Արտադրատնտեսական գույք և գրականություն	-	3-5 տարի
Տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ	-	5-10 տարի
Համակարգչային տեխնիկա	-	3-10 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային

արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Հիմնադրամի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Հիմնադրամը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Հիմնադրամը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման

իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի տրամադրված փոխառությունները, ժամկետային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված փոխառությունները և ժամկետային ավանդները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ

ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 19-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Չմաշվող ակտիվների հետ կապված շնորհները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակաշրջանի ընթացքում, որը կրում է այն պարտավորությունների կատարման արժեքը, որոնց համար ստացվել են շնորհները:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում մրցույթների և դասընթացների կազմակերպումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ): Նման ձևով, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Մատուցված ծառայություններից հասույթ

Երբ պայմանագրի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունում՝ պայմանագրի ավարտի փուլին համամասնորեն: Պայմանագրային ծախսերը ճանաչվում են որպես կատարված, եթե դրանք չեն ստեղծում ապագա պայմանագրային գործունեության հետ կապված ակտիվ: Երբ պայմանագրի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, պայմանագրի հասույթը ճանաչվում է միայն պայմանագրով կատարված ծախսումների չափով,

որոնք ամենայն հավանականությամբ կփոխհատուցվեն: Պայմանագրով ակնկալվող վնասը անմիջապես ճանաչվում է եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունում:

Շնորհներից, նվիրատվություններից և հանգանակություններից եկամուտ

Շնորհներից, նվիրատվություններից և հանգանակություններից եկամուտը ճանաչվում է, երբ հավանական է, որ դրանք կստացվեն և եկամտի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնադրի կողմից հատկացվող միջոցները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դրանք դառնում են ստացման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ միջոցները տրամադրվում են որոշակի պայմաններով, որի դեպքում ստացված միջոցները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհները ճանաչվում են եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Համակարգչային տեխնիկա	Մեքենաներ	Գրասենյակային գույք	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Առ 01 հունվար 2022թ.	**38,103**	**24,444**	**27,659**	**12,406**	**102,612**
Ավելացում	4,404	-	1,287	-	5,691
Նվազում	(4,886)	(19,256)	(54)	-	(24,196)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**37,621**	**5,188**	**28,892**	**12,406**	**84,107**
Ավելացում	2,925	-	-	-	2,925
Նվազում	(17,408)	(1,239)	(25,197)	(5,074)	(48,918)
Ներքին շարժ	500	142	(642)		-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**23,638**	**4,091**	**3,053**	**7,332**	**38,114**
Կուտակված մաշվածություն					
Առ 01 հունվար 2022թ.	**34,589**	**18,704**	**24,664**	**7,348**	**85,305**
Տարեկան մաշվածություն	1,942	1,097	562	1,330	4,931
Նվազեցումներ	(4,765)	(14,613)	(54)	-	(19,432)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**31,766**	**5,188**	**25,172**	**8,678**	**70,804**
Տարեկան մաշվածություն	5,009	79	1,301	1,154	7,543
Նվազեցումներ	(17,298)	(1,219)	(23,636)	(3,605)	(45,758)
Ներքին շարժ	500	22	(522)		-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**19,977**	**4,070**	**2,315**	**6,227**	**32,589**
Հաշվեկշռային արժեք					-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**5,855**	**-**	**3,720**	**3,728**	**13,303**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**3,661**	**21**	**738**	**1,105**	**5,525**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջովին մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 42,035 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 59,456 հազար դրամ):

5. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	Գրասենյակային տարածք
	հազ. դրամ
Սկզբնական արժեք	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	40,260
Ավելացում	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	40,260
Կուտակված մաշվածություն	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,230
Տարվա հաշվարկ	11,604
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,834
Հաշվեկշռային արժեք	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**21,030**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,426**

6. Հետաձգված հարկային ակտիվ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	2,440	(211)	2,651
	2,440	**(211)**	**2,651**

7. Պաշարներ

	31.12.2023թ.	31.12.2022թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Հումք և նյութեր	490	10,044
Այլ նյութեր	312	2,450
	802	**12,494**

8. Դեբիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր	8,749	137
	8,749	137
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	5,711	10,996
Կանխավճարներ հարկերի գծով	-	4,723
	14,460	**15,856**

9. Դրամական միջոցներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ	17,929	53,016
	17,929	**53,016**

10. Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալական պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ընթացիկ	11,127	13,050
Ոչ ընթացիկ	-	11,127
	11,127	**24,177**

Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների, յուրաքանչյուր վարձակալություն արտացոլված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Յուրաքանչյուր վարձակալություն, ընդհանուր առմամբ, սահմանափակում է դնում, ըստ որի, եթե Հիմնադրամը ակտիվը մեկ այլ կողմի ենթավարձակալելու պայմանագրային իրավունք չունի, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործվել միայն Հիմնադրամի կողմից: Վարձակալությունները կամ չեղարկման ենթակա չեն, կամ կարող են չեղարկվել միայն դադարեցման զգալի վճարի դեպքում: Որոշ վարձակալություններ պարունակում են վարձակալության հետագա երկարաձգման տարբերակ:

Ստորև աղյուսակում նկարագրված են Հիմնադրամի վարձակալական գործառույթները ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիպերի.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ (ՕԻՁԱ)	Վարձակալված ՕԻՁԱ-ների քանակը	Մնացորդային ժամկետ (տարի)	Միջին մնացորդային վարձակալական ժամկետ (տարի)
Գրասենյակային տարածք	2	1	1

Վարձակալության գծով պարտավորությունները զեղչելու համար Հիմնադրամի օգտագործած միջին կշռված տոկոսադրույքը 11% է:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար վարձակալության գծով պարտավորություններին հաշվեգրված տոկոսային ծախսը 1,900 հազար դրամ է և ներառված է ֆիանանսական ծախսերում:

Ապագա նվազագույն վարձավճարները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեկ տրվա ընթացքում	հազ. դրամ	հազ. դրամ
Վարձավճարներ	11,633	14,950
Ֆինանսական ծախս	(506)	(1,900)
	11,127	**13,050**
Երկրորդ տարվա ընթացքում	-	
Վարձավճարներ	-	11,634
Ֆինանսական ծախս	-	(507)
	-	11,127
Զուտ ներկա արժեք	**11,127**	**24,177**

11. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2023թ.	2022 թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	**127,053**	**4,755**
Ստացում	8,747	33,640
Շնորհից եկամտի ճանաչում	-	(4,239)
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհից	-	93,921
Փոխարժեքից օգուտ/(վնաս)	3,085	(1,024)
Տարեվերջի մնացորդ	**138,885**	**127,053**

12. Առևտրային այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	10,398	14,508
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների գծով	15,270	35,747
Ստացված կանխավճարներ	10,112	31,766
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	10,863	10,056
Այլ	6,072	-
	52,715	**92,077**

13. Նվիրատվությունից եկամուտներ

Նվիրատվությունից եկամուտը գոյացել է իրավաբանական և ֆիզիկական անձանցից առանց պայմանների կատարման պահանջի անհատույց ստացված դրամական միջոցներից:

14. Պայմանագրերից հասույթ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Հասույթ դասընթացներից	165,378	160,172
Հասույթ մրցումների կազմակերպումից	9,204	15,230
Այլ	32,227	22,665
	206,809	**198,067**

15. Ծրագրային ծախսեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Աշխատակիցներին հատուցման ծախսեր	282,824	270,762
Նվիրատվություններ	67,663	166,132
Ուսումնական գործընթացի զարգացման ծախսեր	68,941	12,522
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	25,091	21,174
Վարձակալության ծախսեր	13,612	14,463
Այլ ծախսեր	17,183	29,674
	475,314	**514,727**

16. Ծառայության ծախսեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Աշխատակիցներին հատուցման ծախսեր	87,903	147,729
Ուսումնական և այլ նյութեր	40,294	62,705
Այլ ծախսեր	3,647	8,309
	131,844	**218,743**

17. Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Հետաձգված հարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(211)	2,907
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-
	(211)	**2,907**

18. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հաշվարկելու համար Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն (օրինակ՝ ըստ աշխարհագրական դիրքի, արտադրանքի տեսակի, հաճախորդի տեսակի և վարկանիշի, ակրեդիտիվների և պարտքային ապահովագրության այլ տեսակների):

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Հիմնադրամի՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Հիմնադրամը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Հիմնադրամի պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Հիմնադրամի առևտրային դեբիտորական պարտքի գծով ակնկալվող պարտքային կարուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է ծանոթագրություն 19 (բ)-ում:

19. Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	31.12.2023 հազար դրամ	31.12.2022 հազար դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,749	137
Ժամկետային ավանդներ	102,602	125,725
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,929	53,016
	129,280	**178,878**

Ֆինանսական պարտավորություններ

	31.12.2023 հազար դրամ	31.12.2022 հազար դրամ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	10,398	14,508
	10,398	**14,508**

20. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի բանկային հաշիվներից և ժամկետային ավանդներից, որոնք արտահայտված են արտարժույթով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

31.12.2023թ.-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ակտիվները/(պարտավորությունները) հետևյալն են.

Արտարժույթով հոդվածներ	ԱՄՆ դոլար	Անգ. ֆունտ	ԱԷԴ	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ	4,365	-	-	**4,365**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	933			**933**
Ժամկետային ավանդ	101,602			**101,602**
	106,900			*106,900*
Կրեդիտորական պարտքեր	(6,070)	(89)	(336)	**(6,495)**
	(6,070)	**(89)**	**(336)**	**(6,495)**
Զուտ արդյունք	**100,830**	**(89)**	**(336)**	**100,405**

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի խելամտորեն հնարավոր արժևորումը/արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահատված ֆինանսական գործարքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու, նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2023թ.	31.12.2022թ.	Դրամի արժևորում/ (արժեզրկում) %
	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	
1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը	404.79	393.57	2.85
1 Եվրոյի փոխարժեքը	447.90	420.06	6.62
1 Ռուբլու փոխարժեքը	4.50	5.59	(19.50)

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, ժամկետային ավանդները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և տրամադրված փոխառությունները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Հիմնադրամը շարունակաբար հսկում է աշխակերտների պարտքի հատկանիշները: Հիմնադրամի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Հիմնադրամի պարտքային ռիսկին ենթարկվածության վրա հիմնականում ազդում են յուրաքանչյուր աշակերտի անհատական բնորոշումները: Այնուամենայնիվ, ղեկավարությունը նաև հաշվի է առնում այն գործոնները, որոնք կարող են ազդել Հիմնադրամի աշակերտական բազայի պարտքային ռիսկի վրա՝ ներառյալ Հայաստանի արդյունաբերության և երկրի դեֆոլտի ռիսկը, հատկապես ներկայիս վատթարացող տնտեսական հանգամանքներում:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը ծառայությունների դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 90 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Հիմնադրամի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	**Անտոկոս**	**Հաստատուն տոկոսա-դրույքով պարտավորություններ**	**Ընդամենը**
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		11%	
Մինչև 2 ամիս	12,112	2,492	14,604
3 ամսից մինչև 1 տարի	13,556	8,635	22,191
1-5 տարի	86,742	-	86,742
	112,410	**11,127**	**123,537**

2022թ.	Անտոկոս	Հաստատուն տոկոսա-դրույքով պարտավորություններ	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		11%	
Մինչև 3 ամիս	30,586	2,492	33,078
3 ամսից մինչև 1 տարի	19,669	8,806	28,475
1-5 տարի	112,613	12,879	125,492
	162,868	**24,177**	**187,045**

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը և տրամադրված փոխառությունները գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

21. Պայմանականություններ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ զարգացած երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21.3 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնադիրները, հիմնական ղեկավար անձնակազմը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ինչպես նկարագրված է ստորև:

21.4 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից, ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում:

21.5 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	հազար դրամ	**հազար դրամ**
Հոգաբարձուների խորհուրդ և հիմնադիրներ		
Շնորհներից մուտքեր	33,577	42,464
Ծախսեր	979	-
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	7,192	4,597
Շնորհներից մուտքեր	-	127,521
Տրված շնորհներ	60,871	93,964
Փոխառությունների մարում	25,895	-
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	24,284	22,772

Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազար դրամ	**հազար դրամ**
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Փոխառություններ	85,891	111,786
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	600	50
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,072	-
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	637	3,021

22. Նախորդ ժամանակաշրջանների էական սխալի ուղղում

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների թողարկումից հետո Հիմնադրամը հայտնաբերել է էական սխալ կապված ստացված դրամաշնորհների և նվիրատվությունների սկզբնական ճանաչման, բանկային մնացորդների և պաշարների նախորդ տարիների մանցորդների ճշգրտման հետ:

Հիմնադրամը, 2023 թվականի ընթացքում նախորդ տարիների սխալների հայտնաբերման արդյունքում, վերաներկայացրել է նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՀՀՄՍ 8-ի «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» կիրառելով հետընթաց ճշգրտում:

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. հունվարի 1-ի դրությամբ վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունների համադրումը ներկայացված է ստորև.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (հազ. դրամ)

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (նախքան (վերաներկա-յացումը)	աճ/ (նվազում)	2023թ հունվարի 1-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	11,455	1,848	13,303
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	21,030	-	21,030
Հետաձգված հարկային ակտիվ	-	2,651	2,651
	32,485	**4,499**	**36,984**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	33,642	(21,148)	12,494
Դեբիտորական պարտքեր	22,203	(6,347)	15,856
Ժամկետային ավանդներ	106,186	19,539	125,725
Մնացորդներ բանկերում	76,987	(23,971)	53,016
	239,018	**(31,927)**	**207,091**
Ընդամենը ակտիվներ	**271,503**	**(27,428)**	**244,075**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		-	
Վարձակալության գծով պարտավորութ.	11,127	-	11,127
Ակտիվներին վերաբերող շնորհներ	516	126,537	127,053
Երկարաժամկետ փոխառություններ	826	111,787	112,613
	12,469	**238,324**	**250,793**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորութ.	13,050	-	13,050
Կարճաժամկետ փոխառություններ	115,383	(115,383)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	72,569	19,508	92,077
Եկամուտներին վերաբերող շնորհներ	111,898	(111,898)	-
	312,900	**(207,773)**	**105,127**
Ընդամենը պարտավորություններ	**325,369**	**30,551**	**355,920**
Զուտ ակտիվներ		-	
Կուտակված արդյունք	**(53,866)**	**(57,979)**	**(111,845)**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորութ.	**271,503**	**(27,428)**	**(111,845)**

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (հազ. դրամ)

	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, նախքան վերաներկայացնելը	աճ/ (նվազում)	2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Վերաներկա-յացված*
Նվիրատվություններից եկամուտ	380,191	74,371	305,820
Պայմանագրերից հասույթ	201,719	3,652	198,067
Այլ եկամուտ	7,119	2,703	4,416
	589,029	**80,726**	**508,303**
Ծրագրային ծախսեր	(505,647)	9,080	(514,727)
Ծառայության ծախսեր	(177,642)	41,101	(218,743)
Գործառնական գործունեությունից (վնաս)/ շահույթ	**(94,260)**	**130,907**	**(225,167)**
Ֆինանսական եկամուտ	4,098	(1,115)	5,213
Ֆինանսական ծախսեր	(3,157)	-	(3,157)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս) զուտ	(50,291)	(76,711)	26,420
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը	**(143,610)**	**53,081**	**(196,691)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	-	-	2,907
Տարվա շահույթ/(վնաս)	**(143,610)**	**53,081**	**(193,784)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-		-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**(143,610)**	**53,081**	**(193,784)**
Տարեսկզբին զուտ ակտիվներ	**89,744**	**171,683**	**(81,939)**
Տարեվերջին զուտ ակտիվներ	**(53,866)**	**57,979**	**(111,845)**